

ՏԻՐԱՆ ՉՐԱԷՅԱՆԸ Մ. ԿՅՈՒՐՉԱՆԻՆԻ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՆԱՍԱԿՆԵՐՈՒՄ

Ավետիսյան Լ.

ՀՀ ԳԱՄ Մ.Արեղյանի անվան գրականության ինստիտուտ

Аветисян Л. Тиран Чракян в письмах адресованных Микаелу Кюрчяну. Изучая письма Тирана Чракяна, которые адресованы Микаелу Кюрчяну, я заметила в них два пласта, один из которых является совокупностью эстетических взглядов Тирана Чракяна, а другой – творческой историей главного произведения автора – «Внутренний мир». Чтобы представить теоретические идеи поэта, я обратила внимание на взгляды, которые относятся к форме и содержанию стихотворения, к цели поэта, к важности роли языка в творении литературы, к взаимоотношению искусства и жизни. Чтобы показать историю творения «Внутреннего мира», я использовала письма, которые помогли мне найти причину выбора жанра, ответы на некоторые другие вопросы, а также узнать, как оценивает свою книгу автор.

Avetisian L. Tiran Tchrackian in Letters Addressed to Michael Kjurchian. Studying Tiran Tchrackian's letters, addressed to Michael Kjurchian, leads me to separation of two general strata: first is Tchrackian's Art of Poetry, and the other is the creative story of his "Inner World". To show the theoretic background of poet, I considered some concepts, concerning the form and essence of poems, their language that plays an important role for creating the literature, as well as his approaches to art and life. To survey the story of creation of the book I have separated the letters, which helped to find out the motives for genre selection, and I also discussed how author presents his book himself.

Յուրաքանչյուր արվեստագետի թողած ժառանգությունը քննելու ժամանակ ուսումնասիրողին մեծապես օգնում են նաև նրա նամակները, որոնք ոչ միայն ավելի պարզ պատկերացում են տալիս ուսումնասիրվող երկի շարժառիթների ու ստեղծման պայմանների մասին, այլև ներկայացնում տվյալ ժամանակաշրջանում իր հայացքներով ու գաղափարներով հանրությունից առանձնացած անհատին:

Ես ուսումնասիրել եմ մի շատ հետաքրքրական նամակների, որ, իմ կարծիքով, կարող է հանդես գալ իբրև ինքնուրույն ստեղծագործություն և ընթերցողին հաճույք պատճառել՝ հեղինակի բազմալիցա հոգու արտացոլումներն իր մեջ կրելու շնորհիվ: Այդ ուշագրավ նյութը Ս. Չրաքյանի նամակներն են՝ հղված իր ամենամտերիմ ընկերոջը՝ Մ. Կյուրճյանին:

Հենց ինքը՝ հեղինակը, նամակներում թուցիկ սահմանում է նամակը՝ որպես ճշմարիտ գրականություն. «Համոզված եմ, որ ճշմարիտ գրականությունը նամակագրությունն է, ինչպես ճշմարիտ պերճախոսությունը կամ իմաստասիրությունը խոսակցության մեջն է: Մարդը խառն է արվեստին՝ այդ պարագաներում մեջ» [1]: Վաղահաս մահվանից մեկ տարի առաջ, լինելով Տիամանուկային ուղղված նամակում վերադառնալով նամակագրությանը՝ նույն համոզվածությամբ ասում է՝ «Գրությունը ավելի կատարյալ միջոց մըն է մտավոր ու հոգեկոթ վայելքի, վասնզի բուն խոսքն է: Բանաստեղծությունը գուտ խոսքը չէ, վասնզի, քերական սովորության բերմամբ ստություն ու ցնորք կը խառնվի անոր» [2]:

Չրաքյանի նամակները որոշ պատկերացում են տալիս այն մասին, թե ինչպիսի հայացքներ ունենա պոետիկայի և ընդհանրապես գրականության վերաբերյալ, քանզի այդ նամակների շատ հատվածներ, ասես, հեղինակի գեղագիտական հայացքների շարադրանքն լինեն: Նա խորին համոզվածությամբ ու շատ հստակ է խոսում բանաստեղծության ներքին ու արտաքին կառույցների, բանաստեղծականի ու արհեստականի, արվեստի ու կյանքի հարաբերությունների և այլ կարևոր հարցերի շուրջ:

Չնի ու բովանդակության խնդրին անդրադառնալով՝ Չրաքյանը կարևորում է բանաստեղծության բուն էությունը՝ գտնելով, որ բանաստեղծությունը ամենից քիչ կարիք ունի արտաքին զարդարանքի, որ այն առանց պարունակի կարող է գոյություն ունենալ, դեռ ավելին. «Առանց գրական «ձառնաստի» կրնա բան բանաստեղծական ըլլալ, ինչպես... բոլոր բնության տեսարանները, տգետի մը խոսքը, մեռելի մը, ոչնչությունը իսկ: Պիտի համարձակվիմ ըսելու, թե հաճախ ավելի շատ բանաստեղծական կը ներկայանա բան մը, երբ գրականության ձևակերպություններն զերծ է: Չարաքյանի հարկ չկա բանաստեղծականացման համար» [3]: Իրական կյանքի տգեղ ու բացասական երևույթները կարող են արվեստի գլուխգործոցների նյութ դառնալ՝ թափանցելով բանաստեղծի հոգու խորքը, և այնտեղից ըլսելով ու քթիմներ հաղորդելով ընթերցողի հոգուն: Ի դեպ՝ գեղագետ Չրաքյանն ունի մի սկզբունք, որ համարում է կատարյալ գործերի ստեղծման երաշխիք ու գրավական, այն է՝ աստվածաշնչյան հայտնի ստույթը (նաև սուղրատայան)՝ «Ճանի՛ր զքեզ», որ պիտի օրենք դառնա մարխալազ գործերի համար: Ըստ Չրաքյանի, քիչ թե շատ առավանդ ունեցող մարդկանց մեծ մասը կարող է հանճարեղ գործեր ստեղծել, եթե պարզապես առաջնորդվի այդ սկզբունքով: Հաղորդվող զգացումը պետք է ապրել ու վերապրել, առանց որի բանաստեղծությունը, որքան էլ նրա նյութը հետաքրքրական լինի, չի կարող հոգեհարազատ լինել: Բանաստեղծությունը ներաշխարհից ու զգացմունքից, ծնվող խոսքն է, որի համար բանաստեղծին պետք չեն արտաքին ձևեր: Հեռաբար, ձևի մեջ դրված բանաստեղծությունը բանաստեղծության մի տեսակն է միայն: Պերսիկայան վարժարանի շրջանավարտ Չրաքյանը Կեղոռնական վարժարանի մեկ այլ շրջանավարտ Արշակ Չոպանյանի կարդացած «Բանաստեղծության վախճանը» վերնագրով ճառին ի պատասխան գրել է համանուն քննադատական հոդված, որում շատ տարամբանական խոսում է նշված խնդրի շուրջ. «Բանաստեղծությունը արձակ ալ կորնա՝ ըլլալ, ուսանավոր ալ. ուսանավորը՝ այդ ձևը բանաստեղծության, կորնա փոխվի, կորնա կորավի իսպառ կամ առժամանակյա կերպով: Նախնի դարաց մեջ ուսանավորը չկար, իսկ բանաստեղծ սրտերը՝ այդ՝ Վերջը՝ ծնավ այդ կաղնապարը, որ դար մը հետո գուցե ալ չգործածվի» [4]: Սակայն ուրիշ անգամ, ի

պաշտպանություն իր այն բանաստեղծության («Սև ծովը»), որ Մ. Կյուրճյանը, նամակներից մեկում քննելով, համարել էր decor, Չրաքյանը տալիս է հետևյալ պատասխանը. «Միշտ պետք չէ՞ միթե decor, երբ մյուսը երազանք մըն է: Իմ decor-ս քերթվածիս մեջ ինչպես մահ գրեթե իրականության մեջ կար աղոնեմ, և մյուսն էր, որ բխեցավ անկե, կամ գնաց պատշաճից տարբերակի ամբող մեջ» [5]:

Շրաքրամի գործածած հակադիր երևույթների զույգը՝ found և forme, փոխարինվում է այլ համանիշ զույգերով՝ նմանակների շարադրանքի ընթացքում, ինչպես օրինակ՝ ճարակություն և նզիի ռանաստեղծություն, ճարտարություն և խորհուրդ:

1897-ով թվագրված մի այլ նամակում Չրաքյանը Կյուրճյանի բանաստեղծություններից մեկը քննում ու վերլուծում է մախ՝ որպես ռուսանավոր, այսինքն՝ քննում է բանաստեղծության տաղաչափությունը, և ապա՝ անցնում բուն բանաստեղծությանը, այսինքն՝ երկը դիտում որպես գաղափարների ու զգացմունքների արտահայտություն: Այստեղ Չրաքյանը բանաստեղծի պարտքն է համարում լինել ճշգրիտ թարգմանը գեղագիտական այն զգացման, որ բանաստեղծություն է դառնում միայն խոր ներշնչանքով: Իսկ բանաստեղծությունը միջոց պիտի լինի՝ բանաստեղծի զգացմունքներն ու տրամադրություններն ընթերցողին փոխանցելու համար. «Արցունքոտ բանաստեղծություն մը պետք է տխրեցնեմ գեթ, զվարթ զոված մը՝ ուրախություն տա...» [12]:

Գրականության ստեղծման գործում Չրաքյանը կարևորություն է տալիս լեզվի խնդրին: Ներքոգրելով գրաքաղը՝ նա բողոքում է լեզվի այն աստիճանի մշակվածության ու հասարակացման դեմ, որ այլևս անհնար է լինում ճշգրիտ հաղորդել իմաստները, և որ այդ լեզվով գրված գրականությունը, պարզունակության պատճառով հասկանալի դառնալով լայն ժողովրդական զանգվածներին, վերածվում է ընդամենը ժողովրդական դաստիարակության. «Լեզուն ռասկացնելով՝ անխելքները իջան ռասկին մտքին պայմաններուն: Եվ գիտե՞ս՝ լեզվապաշարի միջոցին ոչ որ աս խառը ըսավ: Չբավեցավ սա պայծառ բանը, թե բարձր միտքով մը դույզն բան կարելի է արտադրել, ճոխ միտքով մը՝ աղքատ, ժողովրդային բան գրել, թե գրականությունը ժողովրդային դաստիարակություն է: Գոքարարի բառերը, հոծ, հոյակերտ բարդությունները լքելով միթե ճշմարիտ ուժեր չէ՞, որ զանց կ'առնենի կոր ավանակները: Պարզապես հիմար խելո՞ք բան է տաշված, մեղմացած լեզու ունենալ, մինչդեռ իմաստները վայրի են» [15]: Իսկ հենց ինքը՝ Չրաքյանը, ոչ գործածական դարձած, մեռած բառերը փորձել է կյանքի կոչել՝ դրանց մեջ հաճախ դնելով այլևայլ իմաստներ: Անգամ նա ստեղծել է նորանոր բառեր: Ինչպես հայտնում է նամակներից մեկում, այդ բառերի մեծ մասը ժողովել է բառարաններից, բայց գործածել ոչ թե այն խմատով, ինչ հաղորդում է բառարանը, այլ՝ ինչ ինքն է զգացել այդ բառերում: Նա գտնում է, որ բառարանագիրները չեն հասկացել մատենագիրների բառերը, հատկապես նրանք, որոնք ստեղծվել են հենց մատենագիրների կողմից:

«Կատարյալ գործերուն մեջ ծայրեփծայր արվեստ կա, և երբեք՝ արվեստի երևույթ» [17]: Իսկ Չրաքյան արվեստագետի մյուս կարևոր համոզմունքը քաջում է մախրող ձևակերպման փակագծերը. «Արվեստը՝ կյանքի արտահայտությունն է ոչ թե կյանքին մոտարկում, ձևացում» [18]: Մա էր Չրաքյանի համար արվեստի իդեալը, և սա էր «Ներաշխարհից» մեկ-երկու հատված ջնջելու պատճառը: Նամակներում այս մասին հաղորդելով՝ պատճառաբանում է իր արարքը. «Վասնզի բոլորովին իրական դեպք մը չէր» [19], կամ «վտարած եմ անոր համար, որ սկզբին ցվերջ այդ կտորին ընթացքը աղեկ աստիճանված ու աղեկ այդարացված չէր» [20]:

Հիմնականում սրանք էին գեղագիտական հայացքների այն շերտը, որը սուկա է մամակներում, և որը կարող է լրացնել հոգվածներում և ինքնադատականում արտահայտված տեսական գաղափարների համակարգը:

Բացի սրանից՝ մամակներում կա մի ուրիշ ուշագրավ շերտ, որ անմիջապես «Ներաշխարհին» է վերաբերում: Նախ՝ կարելի է ստեղծել, գուցե և պարզապես ներկայացնել «Ներաշխարհի» ստեղծման պատմությունը:

1897 թվականին Իսկյուտարից Կյուրճյանին գրված մի մամակում Չրաքյանը հայտնում է իր անհանգիստ հոգեկան վիճակի մասին և այդ վիճակը փորձում է քացատրել իր մտքով անցնող ծրագրերով, այն է՝ «օրագրի ձևով հատոր մը գրել, հատոր մը, որ իմ տպավորություններս պատմեմ խորհրդածող, տրտում սևերուն հատոր մը և որ օրինակի համար ունենա սա վերնագիրը, որ կը հոսան թե պիտի պատշաճի նյութին, «Մտվերի մը երազները» կամ «Մտվերի մը խոհանքը» [21]: Բանաստեղծական հոգին, որ տպավորություններ էր ամբարել իր խորհող ու երազող ներաշխարհում, գուցե սալոյում էր գաղափարների խնդրման ու «Ներաշխարհը» երկներու անհանգիստ մի ժամանակաշրջան, երբ գաղափարները, ծնունդ առնելու համար, նրա մտքում խորհրդամիջներ էին «ժազգում»: Ճշմարտությունն աշխարհի է գաղի քողարկված, ստվերի ու երազի ներսում թաքնված:

Այս մամակը գրելուց դեռ ամիսներ առաջ նա կանխագգում էր, որ 1897 թվականին իր կյանքում լինելու է շրջադարձային ժամանակաշրջան. «97-ը ճակատագրական տարին պիտի ըլլա, ի՞նչպես կարելի է չսարառալ...»:

Նրա մտքով ծրագրեր էին անցնում, փորձում էր կերպարանք տալ ներքին անձև տիեզերքին, միաժամանակ փորձում էր ճշտել գրելիքի ժանրը. վեպը մոտ չէր նրա սրտին. «Շատ չեմ սիրել վեպը, որ սուտ է» [22], մախրելույնում է օրագրության եղանակը՝ որպես տպավորություններն ու զգացմունքները ճշգրիտ արտահայտելու միջոց: Իսկ թե ինչ բնույթի երկ էր ստեղծելու, կարելի էր եզրակացնել նաև նրա հետաքրքրությունների ու ձեռք բերած գիտելիքների, ընթերցած գրականության ու իմաստասիրական երկերի շրջանակներից, բայց հետևենք նրա բնորոշմանը. «Այսեր Պենատ մեծ նկարչին վրա գրված մասնագիտության մը մեջ ըսված էր, թե փորձեր եղան այս դարավերջին՝ հաշտեցնելու, գողելու Արվեստը Կրոնին, Գրականությունը՝ Գիտության կամ Գիտությունը Կրոնին: «Այսեր Պենատ Գիտությունը խառնեց Արվեստին»: Եվ հուզումով, տենդով պիտի խորհիմ, որ ես ալ Փիլիսոփայությունը պիտի խառնեմ Արվեստին» [23]: Ու գտնում էր, որ դա սակ իրազ չէ, որ ինքը այդ բանն ամելու բոլոր տվյալները կամ գոնե այդ տվյալները գտնելու բուն ցանկություն ունի:

Նրա մամակներում կան բազմաթիվ հատվածներ, որ, թվում է, հետո մուլությունք տեղադրվել են «Ներաշխարհում», քանի որ դրանք էլ են գտնվում ներաշխարհային թրթիռների, զգացումների ու խոհերի մոյն դաշտում: Եվ կարող է մույնիսկ այնպես թվալ, թե «Ներաշխարհը» տարբեր մամակներից քաղված և տարբեր տպավորություններ ամփոփող մի համահավաք է:

Նրա նյութն, ուրեմն, տպավորությունների այն ամբողջությունն էր, որ ներաշխարհը պատկերելու համար տալիս էր կյանքը: Մի մամակում, ընկերոջը հաղորդելով իրենց տեղափոխման մասին, Չրաքյանը նկարագրում է իր նոր սենյակը, և այդ նկարագրությունն ինքնբերական ընթերցողին տանում է դեպի «Ներաշխարհի» առաջին էջը. «Մեկ պատռեման մը ունի, որ կը մայի տաճիկ գերեզմանոցին վրա, որ, սակայն, ամուշ պարսկի մը երևույթն ունի այդ մասին մեջ, որովհետև գերեզմանաքարեր չկան շատ, և մարդ գրեթե երբեք առիթ չ'առնեմար թաղված մեռելներուն վրա խորհելու: Գրասեղանս՝ քանի մը գիրք վրան, բազմոց մը՝ վրան շնագայլի մորթս, մահճակալս, աթոռ մը կկազմեն սենյակիս կահավորումն ու զարդարանքը. նաև հայելին, որուն մեջ կը սիրեմ մտածումներուս memento-ն դիտել, կազ մը պատին վրա, որին հորդ լույսը չեմ սիրեր, և ճրագ մը, գոր կը վառիմ հաճախ իր ստվերու լույսին համար: Պատռեմանն վերջալույսին թախծագին սողակներները կը դիտեմ մոռնիներուն մեջ, անկնց կը լսեմ գիշերները անոնց մեջեն անցնող ծնունդ հուլան ծայրը...» [24]:

Մեկ ուրիշ մամակում, որ Չրաքյանը գրել է՝ Կյուրճյանի հոր մահվան լուրը նրան հաղորդելու ծանր պարտականությունը ստանձնելով, սփոփանքի խոսքեր կան, որ այնքան համահունչ են «Ներաշխարհի» փիլիսոփայական ու խոհական տողերին՝ հատկապես հորը վերաբերող հատվածին. «Հորդ հայությունը կը սկսի այն առնեմ, երբ իր էութենեմ կ'անցնալիս դուն, կազմելու համար իր հին տարրերով նոր ազատ էակ մը, և գիտես, թե հորդ հայությունը հոգ նաև կը վերջանա» [25]:

Նույն մամակում նկարագրում է հուղարկավորության ծեսը և ներկայացնում այն փորձիկ թափորը, որ հետևում էր մեջեջային՝ կազմված դրացիներից, մի քանի ծանոթներից ու «ժակյուտարի այն մեկ-երկու ապուշներն, որոնք բնու կը կրին, դյուրին համեմարաբարություններ կը կատարին, և խորին, անհասկնալի ձգտումով մը ամեն մեռելի կ'ընկերանան»: Իսկ տողատակում նշված է, թե դա գրելու մի նյութ է, որ երկար ժամանակ հուզել է իրեն: Եվ, իհարկե, «Ներաշխարհի» մի մեծ հատված նվիրված է «խորհրդավոր խնեքին»:

Իսկ մամակի մի քանի տողով ուրվագծվում է բնապաշտի դիմքը, որ ներկա է «Ներաշխարհի» էջերում. «Մեղք, որ գերեզմանոց մը կա: Ո՞րքան գեղեցիկ պիտի ըլլար, երբ մարդ իր սիրելիին գերեզմանը ունենար իր մոտը, իր պարտեզին մեջ և անոր տարրադրածն անդալորած տունկերը, փուշ կամ ծաղիկ, տեսներ ու մտախոհելու առիթ մը ըներ գանոց...»:

Չրաքյանի միտքը հուզում էր այն ամենը, ինչ խորհրդավոր էր, մութ ու անեղծվածային: «Ներաշխարհում» այդ անեղծվածայինը մարմնավորված է բուրգերի երկիր Եգիպտոսի կերպարանքով, որի երազը, ինչպես երևում է մամակներում, անվերջ բացկուտացել է բանաստեղծի սրտում, որը գերել է նրան՝ հուսահատեցնելու աստիճան, և որն ուրվագծվում է նրա պայծառ երևակայության մեջ՝ եվրոպականությունից գուրկ պատկերով, ար-

մալենիների միջով ընթացող պոետի և դարավոր Նեոդոսի, որպես ներկա հանդիսացող արարական միմարեն-
րու, նեղ ու զարպում փողոցների հնայքով, աղմկալի «bazar»-ով, «ու այս ամենի անդին, պղնձագույն իրիկունի
մը հեռուին մեջ նկարվող ամուռնական սիլուետը, մարդկային ու անասնական, ու մանավանդ ցնորական, որ չեմ
գիտեր՝ ինչու կը բարձրանա հեռուին, ավագին ու ամայության մեջ, մշտնջենավորված մտախտությամբ-Սփինք-
սը» [26]:

Նամակներում շատ խորհրդածություններ կան, որոնք «Ներաշխարհին» չվերաբերելով հանդերձ՝ ներաշ-
խարհային են իրենց ոճով, հեղինակի ոգու դրոշմով: Դրանք խոհեր են «Ես»-ի դրամատիկական երկփեղկվա-
ծության, «կյանք» ու «մահ» հասկացությունների հարաբերականության, կատարելության մասին, որին բանաս-
տեղծը գլխավորապես ձգտում է տառապանքի ժամերին ու երջանկության պահերին, տառապանքի ժամանակ՝
բարձր լինելու նրանից և երջանկության ժամանակ՝ արժանի լինելու նրան: Նամակ խորհրդածություններից շա-
տերում Չրաքյանի մետաֆորները վերաճում են տարրադրական սիմվոլների, ինչպես միգամած քաղաքի ուրվագի-
ծը, որ հանկարծ երևում է երազներում քնածով ու բնությանը ներշնչվող բանաստեղծին, «միգայիստոն քաղաքի
սիլուետը, այսինքն՝ ապագադ... Ապագան՝ անտանելի ու տխուր կերպով անհրաժեշտ սուպրան, իր ամբողջ քա-
ղաքայնությամբ: Իմ մեծագույն վիշտս ապագան է» [27]:

«Ներաշխարհը» ձևված է ուսուցչին՝ Պերպերյանին, որին Չրաքյանն առաջարկել էր գրել գրքի առաջա-
բանը: Մի նամակում Չրաքյանը գրում է, թե ինչպես, լսելով, որ դեռ առաջաբանը գրված չէ, այցելում է ուսուցչին,
որն էլ, դրոված մի երրորդ մարդու ներկայությամբ, կարողանում է իր խիղճը պարզել ու հայտնել իր համոզ-
մունքը, թե գիրքը բանաստեղծական, իմաստասիրական գործ է՝ շատ վերացական, իսկ գիրքն ու հեղինակին
բնորոշում է mystique բառով:

Չրաքյանը մեկ ուրիշ նամակում տալիս է միտախի հասկացության իր շատ հետաքրքիր մեկնաբանություն-
ը, ըստ որի, միտախի երևակայություն է անհրաժեշտ գոեհկազույն բաների մեջ արժեք կամ բանաստեղծություն
տեսնելու համար և դրանք խոսացնելու, արտաքսոստ կոչում ու կոպիտ բարքերի մեջ բարոյականը տեսնելու և այդ
բարոյականը իդեալաշատության նպատակելու համար:

Չրաքյանը խոսում է նաև բանագործությունների մասին և բացատրում, որ մի բան գրելուց հետո էր միայն
պատահաբար մույն մտքերին հանդիպում որևէ գրքում կամ ամսագրում, սակայն իր մտածումը գուշակությամբ է
եղել: Հետո ավելացնում է. «Ինչ որ կը ստղծվի այս տեսակ դիպվածներին, սա է, թե չի բավեր մեծ միտքերու խոր-
հածները խորիլ, պետք է նորագույն, մեծագույն բան մը եղանակը» [28]:

Նամակներից մեկում կա մի խոստովանություն՝ ընթերցողից հեղինակի ակնկալիքի մասին, որտեղ Չրա-
քյանը հեղինակի իրավունքը մոլեռանդի բռնավորություն է համարում: Դրանով է հեղինակը երկրպագության
հարկադրում ուրիշին, երկրպագություն՝ իր կողմին ու իր կողմից պաշտվող վսեմին:

Իսկ գրքի մասին տասնյակ բնորոշումներ կան, որոնցով կարելի է համարել «Ներաշխարհի» «Ծանոթու-
թյունը»: Իր գիրքը մա փոքր է համարում՝ նշելով, որ մեծ լինելու ժամանակը չի ունեցել, իսկ փոքր գրքից առավել
և կատարելություն է պահանջվում, որի անհնարիությունը իր պարագայում խոստովանում է Չրաքյանը: Ինքն
էլ գիտի, որ այն չի պատշաճեցրել սկզբունքներին ու չի կատարելագործել, և իր մեղքը համբերությամբ չունենալով է:

«Մի՛հեղուր մեջ երևան ելած աղտամանը մըն է, և գոհարներում մեջ դրված brilliant մը չէ» [29]: (Իրոք՝
ճշմարիտ ու արդարացի համեմատություն):

«Ներաշխարհի» նախապայման է համարում ճշմարիտ ու Գեղեցիկ Բնաստվածության անկեղծ պաշ-
տամունքը, և հենց այդ պաշտամունքն է նրա Art Poétique-ը («Ընթերցական արվեստը»):

«Ներաշխարհի» մասին նրա ամենագեղեցիկ նամակը գրված է 1903թ. «Գիրքը թե՛ իր (Վերժեն՝ Չրաքյա-
նի կինը - Լ.Ա.) և թե՛ իմ իդեալումս է. ինքն իմ է այնպես, ինչպես պիտի բաղձար, որ ըլլար արդարև, - ոգի, - եթե
նույնիսկ մեռներ այդ ոգիացմամբը: Ես իմ եմ այնպես, ինչպես իր բոլոր սերը ազոտապես կը ստեղծն գիս- հեք
ու անհուն խանդավառանքի արժանի, անեղձ՝ և լինի երկրպագության - վերջապես մեր երկուքին անաշխարհա-
յին, երկնավոր վիճակն է անիկա, մի այժմու կյանքեն վեր երկնացած, ու զայն հովանավորող, մեր նույնությունը,
մեր իսկությունը նախախնամորեն պահպանելու կարող իդեալ:

... Գիրքը ես իսկ եմ. այն ատենի վայրկյաններովս, խառնվույն լեցուն, հետևաբար՝ նույն ճակատագիրովը»
[30]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Գ.Ա.Ս, Միքայել Կյուրյանի ֆունդ, Իր., № 241:
- [2] Գ.Ա.Ս, Տիրան Չրաքյանի ֆունդ, № 19:
- [3] Գ.Ա.Ս, Մ. Կյուրյանի ֆունդ, Իր., № 238:
- [4] Տիրան Չրաքյան, Երկեր, Երևան, 1981, էջ 312:
- [5] Գ.Ա.Ս, Մ. Կյուրյանի ֆունդ, Իր., № 238:
- [6] Գ.Ա.Ս, Մ. Կյուրյանի ֆունդ, Իր., № 245:
- [7] Նույն տեղում:
- [8] Տիրան Չրաքյան, Երկեր, Երևան, 1981, էջ 322:
- [9] Նույն տեղում, էջ 313:
- [10] Գ.Ա.Ս, Մ. Կյուրյանի ֆունդ, Իր., № 245:
- [11] Նույն տեղում:
- [12] Գ.Ա.Ս, Մ. Կյուրյանի ֆունդ, Իր., № 237:
- [13] Նույն տեղում:
- [14] Գ.Ա.Ս, Մ. Կյուրյանի ֆունդ, Իր., № 247:
- [15] Նույն տեղում, № 241:

- [16] Նույն տեղում, № 239:
- [17] Նույն տեղում, № 247:
- [18] Նույն տեղում, № 241:
- [19] Նույն տեղում, № 244:
- [20] Նույն տեղում, № 241:
- [21] Նույն տեղում, № 238:
- [22] Նույն տեղում:
- [23] Նույն տեղում:
- [24] Նույն տեղում, № 236:
- [25] Նույն տեղում, № 239:
- [26] Նույն տեղում:
- [27] Նույն տեղում, № 238:
- [28] Նույն տեղում, № 242:
- [29] Նույն տեղում, № 245:
- [30] Նույն տեղում: